ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«22» մարտի 2019թ. թիվ -----

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2008-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի 2019 թվականի մարտի 22-ի նիստի թիվ 1 արձանագրությունը, Հիմնադրամի 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սույն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում հատուցման գումարներ վճարել այն զինծառայողներին (Օրենքով սահմանված այլ շահառուներին), որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել 2008-2014 թվականներին տեղի ունեցած մարտական գործողությունների՝ մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու արդյունքում:
2. Սահմանել, որ հատուցումները վճարվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից Հիմնադրամ ներկայացված Օրենքի 5-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի թիվ 86-Ն որոշմամբ հաստատված կարգով, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված, զինծառայողների և շահառուների պետական կենսաթոշակային ապահովության տեսակների և դրանց շրջանակներում նրանց վճարվող գումարների չափերի վերաբերյալ տեղեկությունների ու փաստաթղթերի հիման վրա:

3. Սույն որոշման համաձայն հատուցման գումարների չափը սահմանվում է Օրենքի համաձայն՝ կախված զինծառայողի զինվորական կոչումից և հատուցման դեպքից: Ընդ որում, Հիմնադրամի կողմից զինծառայողներին կամ Օրենքով սահմանված այլ շահառուներին Օրենքով սահմանված հատուցման գումարներից միանվագ վճարումներ չեն տրամադրվելու, այլ փոխանցվելու են միայն ամսական հավասար վճարումները (անուիտետային վճարներ)՝ հաշվարկված սույն որոշման 4-րդ կետին համապատասխան:
4. Սահմանել, որ զինծառայողներին կամ նրանց շահառուներին վճարվելու է միայն Օրենքի հիման վրա հաշվարկված ամսական անուիտետային գումարի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում նրանց վճարվող ընդհանուր գումարի դրական տարբերությունը*:

4.1. 2008-2014թթ.-ին տեղի ունեցած դեպքերի մասով անուիտետային վճարների հաշվարկները կատարելիս, Հիմնադրամի կողմից տրամադրվող հատուցման գումարից չմասհանել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա տրվող պարգևավճարները:

5. Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված ամսական հավասար վճարումները վճարվում են 240 ամսվա ընթացքում՝ սկսած Հիմնադրամի ակտիվների ու պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կողմից հատուցման գումարը վճարելու մասին որոշման ընդունման հաջորդող օրվանից:
6. Սահմանել, որ հիմնադրամի կողմից վճարվելու են նաև Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ամսական 100 000 դրամ լրացուցիչ գումարները՝ տվյալ մասով նախատեսված կարգավորումներին համապատասխան:

6.1. Սույն որոշման 6-րդ կետով սահմանված ամսական 100 000 դրամ լրացուցիչ գումարը տրամադրել ամբողջությամբ, անկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին վճարվող ընդհանուր գումարի չափից:

7. Սահմանել, որ անկախ վճարումը փաստացի կատարելու ժամկետից՝ վճարումների հաշվարկման համար հիմք է ընդունվում 2019 թվականի ապրիլի 1-ը:
8. Առաջարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը, ինչպես նաև շահառուների մասով պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության մեջ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետում Հիմնադրամին գրավոր տեղեկացնել սույն որոշման հիման վրա հատուցումներ ստացած զինծառայողների և շահառուների կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության

շրջանակներում ստացվող ամսական գումարների չափերը՝ ճշգրտումներ կատարելու նպատակով:

Զինծառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝ Դավիթ Տոնոյան

** Օրինակ՝ Առաջին կարգի հաշմանդամ սպան, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է ամսեկան 60 000 դրամ պետական աջակցություն, հիմնադրամից կստանա լրացուցիչ 240 000 դրամ (300 000 - 60 000):*